# 142 Քարոզում ենք ամեն տեսակ մարդկանց
(1 Տիմոթեոս 2:4)

1. Աստծուն թող նմանվենք Ամենակալ,
 Նա շատ բարի է և անկողմնակալ:
 Ամեն տեսակ մարդկանց կանչում է նա՝
 Դառնան իրենը, փրկություն ստանան:

***(ԿՐԿՆԵՐԳ)***

*Կարևոր չէ՝ որ երկրից,*
*Որ ազգից են, որ լեզվից.*
*Ամեն տեսակ մարդկանց ենք ավետում:*
*Ջերմ սիրով ենք պարուրում*
*Ու նրանց մասին հոգում.*
*«Դարձե՛ք Աստծու ընկերը» հորդորում:*

2. Լուրին կյանքի երբ չեն արձագանքում,
 Նրանց դատել բնավ չենք ցանկանում:
 Սրտի խորքերն է Յահը պարզ տեսնում,
 Գնահատում, նրանց իր մոտ կանչում:

***(Կրկներգ)***

3. Հորդորն այս կարևոր է չափազանց.
 «Թողե՛ք աշխարհը չար, ապականված»:
 Աստծու սուրբ կամքն է, որ բոլոր մարդկանց
 Ճշմարտության մասին հայտնենք սրտանց:

***(Կրկներգ)***

(Տե՛ս նաև Հովհ. 12:32; Գործ. 10:34; 1 Տիմոթ. 4:10; Տիտոս 2:11)

snylpnw-REA No. 142 5/15
© 2015 Watch Tower Bible and Tract Society of Pennsylvania